ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- փետրվարի 2026 թվականի №-Ա

«ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

1) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №516-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոնների (այսուհետ՝ ԷՄՇ կանոններ) 54.1-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն (գործող խմբագրությունն ուժի մեջ է մտել 2025 թվականի ապրիլի 11-ից)՝ ատոմային սակագնային կարգավորման ենթակա կայանին (այսուհետ՝ ատոմային ԿԷԱ կայան) ԷՄՇ կանոնների 49-րդ կետի համաձայն տրվում է ՀՊԿԼ կարգավիճակ (երբ էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի (այսուհետ՝ ԷՄՇ) առևտրի մասնակիցը միանում է ԷՄՇ այլ առևտրի մասնակցի հաշվեկշռման խմբին՝ վերջինիս լիազորելով միայն իր հաշվեկշռման պատասխանատվությունը) միայն կայանի ամբողջական կանգառի ռեժիմում պլանային նորոգման առաջին օրվանից մինչև պլանային նորոգման վերջին օրն ընկած ժամանակահատվածի համար,

2) «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունը №3 և №4 տուրբոագրեգատների հաջորդաբար նորոգման աշխատանքներով պայմանավորված՝ 2025 թվականի նոյեմբերի 23-ից սկսած աշխատել է 50% հզորությամբ, որի ավարտը նախատեսվում էր նոյեմբերի 30-ին,

3) «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Շուկայի օպերատոր) կողմից 2025 թվականի նոյեմբերի 23-ի ժամը 00:00-ից մինչև նոյեմբերի 27-ը ժամը 01:00-ն ընկած ժամանակահատվածի համար շուկայի կառավարման ծրագրում «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության ԿԷԱ կայանին №220237RPP01 պրոֆիլում տրվել է ՀՊԿԼ կարգավիճակ,

այն դեպքում, երբ «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունն այդ ժամանակահատվածում աշխատել է 50% հզորությամբ: Արդյունքում, ԷՄՇ կանոնների 54.2-րդ կետի 1-ին ենթակետի ուժով «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունը վերոնշյալ ժամանակահատվածում չի մասնակցել օր առաջ շուկայի (այսուհետ՝ ՕԱՇ) առևտրին,

4) Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 2025 թվականի դեկտեմբերի 2-ից հարուցել է վարչական վարույթ Շուկայի օպերատորի նկատմամբ՝ ԷՄՇ կանոնների 54.1-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի վերաբերյալ Շուկայի օպերատորը ծանուցվել է Հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 2-ի №ՄՄ/34.3-Մ2-24/6596-2025 գրությամբ: Նույն գրությամբ Շուկայի օպերատորը տեղեկացվել է նաև, որ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վարչական վարույթի մասնակցի լսված լինելու իրավունքն ապահովելու նպատակով, նույն հոդվածին համապատասխան, անհրաժեշտ է վերը նշված գրությունն ստանալուց հետո տասնօրյա ժամկետում ներկայացնել վարույթում քննարկվող հարցի վերաբերյալ վերջինիս դիրքորոշումը և այն հիմնավորող փաստաթղթերը,

5) Շուկայի օպերատորը 2025 թվականի դեկտեմբերի 12-ի №434ՆՀ գրությամբ ներկայացրել է իր պարզաբանումները, մասնավորապես՝ նշելով հետևյալը. «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 436-Ա որոշմամբ հաստատված հավելվածով «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունը էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ուղիղ պայմանագրերի շուկայի կարգավորվող բաղադրիչի (այսուհետ՝ ԿՈՒՊ բաղադրիչ) մեկնարկից հետո առաջին անգամ 2024 թվականի նոյեմբերի 23-ից մինչև 30-ն ընկած ժամանակահատվածում նախատեսում էր կանգառ՝ 50 տոկոս հզորությամբ: Քանի որ ընկերության մասնակի կանգառի տարբերակի համար Հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 29-ի №520-Ն որոշմամբ նախատեսված չէր որևէ հիշատակում, ուստի Շուկայի օպերատորը որոշման վերաբերյալ Հանձնաժողովից 2024 թվականի նոյեմբերի 25-ի №ՄՄ/34.3-Ղ4-4/5512-2024 գրությամբ ստանալով համապատասխան պարզաբանում՝ Շուկայի կառավարման ծրագրում (այսուհետ՝ ՇԿԾ) ատոմային ԿԷԱ կայանի մասնակի կանգառի դեպքում

վերջինիս համար ամրագրել էր ՀՊԿԼ կարգավիճակ: Մեկ տարի անց, Հանձնաժողովի 2024 թվականի դեկտեմբերի 25-ի №435-Ա որոշմամբ հաստատված հավելվածի համաձայն սահմանված 2025 թվականի նոյեմբերի 23-ից 30-ն ընկած ժամանակահատվածի համար Շուկայի օպերատորը, հաշվի առնելով նույն՝ վերոնշյալ պարզաբանումը, ՇԿԾ-ում դարձյալ ամրագրեց ԿԷԱ կայանի ՀՊԿԼ կարգավիճակը: Հանձնաժողովի 2025 թվականի ապրիլի 9-ի №134-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի ձևակերպման 54.1-րդ կետի 2-րդ ենթակետի փոփոխությունը Շուկայի օպերատորի կողմից թյուրիմացաբար չի ներառվել ՇԿԾ, որի արդյունքում ատոմային ԿԷԱ կայանի ՀՊԿԼ կարգավիճակը գործել է կարգավորումների նախորդ տարբերակով՝ 2025 թվականի նոյեմբերի 23-ից: Վերջինս շտկվել է միայն 2025 թվականի նոյեմբերի 28-ին:

Միաժամանակ, քանի որ ՀՊԿԼ կարգավիճակ ունեցող բոլոր ԷՄՇ մասնակիցները շուկայի ՕԱՇ հատվածում իրավունք ունեն տալ ցանկացած հայտ, բացի ԿԷԱ կայաններից, ապա, ինչպես նշվեց, №134-Ն որոշումն ընդունելուց առաջ, խուսափելով ՇԿԾ-ի ՕԱՇ հատվածում գլոբալ փոփոխությունից, ԿԷԱ կայանների՝ ՕԱՇ-ում հայտ տալու հնարավորությունը ծրագրային արգելափակված չէր՝ նախատեսելով ՀՊԿԼ կարգավիճակում գտնվող ԿԷԱ կայանների՝ ՕԱՇ հատվածում հայտ տալու դեպքում Շուկայի օպերատորի կողմից Հանձնաժողովին գրավոր տեղեկացնելու տարբերակը: Այլ կերպ ասած վրիպակը, որի արդյունքում ատոմային ԿԷԱ կայանը 50 տոկոս հզորությամբ աշխատելու ժամանակահատվածում մնացել է ՀՊԿԼ կարգավիճակով, չի զրկել կայանին ՕԱՇ հատվածում հայտ ներկայացնելու հնարավորությունից: Հայտի բացակայությունը կարող էր պայմանավորված լինել այլ պատճառներով, օրինակ, կայանում հզորության իջեցմամբ պայմանավորված՝ լրացուցիչ էլեկտրաէներգիայի բացակայությամբ:

Շուկայի օպերատորը նշել է նաև, որ ատոմային ԿԷԱ կայանի ՀՊԿԼ դրված և նոյեմբերի 28-ից ՀՊԿԻ կարգավիճակների միջև շուկայի ՕԱՇ հատվածում (որտեղ ենթադրվում էր, որ պետք է ներկայացվեր վաճառքի հայտը) գնային տարբերություններ չկան: Դեռ ավելին, նոյեմբերի 23-27-ն ընկած ժամանակահատվածում ՕԱՇ-ի միջին քլիրինգային գինը կազմել է 29,46 դրամ/կՎտժ, իսկ 28-30-ն ընկած ժամանակահատվածի քլիրինգային գինը՝ 29,86 դրամ/կՎտժ: Այսինքն ճիշտ հակառակը, ՕԱՇ-ում նոյեմբերի 28-30-ն ընկած ժամանակահատվածի ատոմային ԿԷԱ կայանի վաճառքի ներկայացված հայտերի պայմաններում տեղի է ունեցել քլիրինգային միջին գների որոշակի աճ, ինչը հաստատում է, որ գների աճի պատճառը ատոմային ԿԷԱ կայանի վաճառքի հայտի բացակայությունը չէր: Շուկայի ՕԱՇ հատվածում առ այսօր

գնային նվազման միտում չի նկատվում անգամ դեկտեմբերի 1-ից՝ ատոմային ԿԷԱ կայանի 100 տոկոս հզորությամբ աշխատելու և ՕԱՇ հատվածում հայտ ներկայացնելու պարագայում (դեկտեմբերի 1-ից առ դեկտեմբերի 10-ը ՕԱՇ քլիրինգային միջին գինը դարձել է 29.92 դրամ/կՎտժ): Գների աճը ենթադրվում է՝ պայմանավորված էր ոչ թե ատոմային ԿԷԱ կայանի ՕԱՇ հատվածում հայտ չներկայացնելու, այլ Շուկայի ԿՈՒՊ բաղադրիչում ատոմային ԿԷԱ կայանի հզորության 50 տոկոս բեռնվածության պատճառով 2025 թվականի նոյեմբերի 23-ից սկսած՝ մասնակիցների կողմից գնված էլեկտրաէներգիայի քանակության կտրուկ նվազմամբ, իսկ արդեն կայանի 100 տոկոս բեռնվածության ժամանակահատվածից սկսած գների նվազում տեղի չի ունեցել, քանի որ աճել է թե համակարգի սպառումը, թե եղանակային պայմաններով պայմանավորված նվազել է արևային կայանների գեներացիան: Այսինքն, շուկայի ՕԱՇ հատվածում նշված բոլոր ժամանակահատվածներին գոյություն է ունեցել էլեկտրաէներգիայի քանակության պահանջարկի գերազանցում առաջարկից՝ դեֆիցիտ (պակասուրդ): ՕԱՇ-ի այսպիսի միակ սցենարում (որը տեղի է ունեցել նոյեմբերի 23-27-ն ընկած ժամանակահատվածի բոլոր առևտրային ժամանակահատվածներում) քլիրինգային գինը ձևավորվում է սահմանային գնման հայտով՝ համաձայն ԷՄՇ կանոնների 152-րդ կետի, որի պարագայում գնի նվազում ակնկալելի չէր:

Ինչ վերաբերվում է ՕԱՇ վաճառքի հայտի բացակայության պատճառով «Հայկական ատոմային էլեկտրակայան», «Երևանի ՋԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունների և ՕԱՇ մասնակիցների՝ որպես ատոմային ԿԷԱ կայանի ՀՊԿԼ կարգավիճակի հետ առնչվող կողմերի հաշվարկների փոփոխություններին, ապա Շուկայի օպերատորը նոյեմբերի 23-ից մինչև 27-ն ընկած ժամանակահատվածում ատոմային ԿԷԱ կայանի կողմից առաքված էլեկտրական էներգիային առնչվող հաշվարկները ներկայացրել է կից ֆայլով, համաձայն որոնց՝ առկա է հետևյալ պատկերը.

- «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի համար տեղի է ունենում հետևյալը. եթե ընդունենք, որ բոլոր ժամերին դրական անհաշվեկշռույթ ընկած էլեկտրական էներգիայի քանակությունը ամբողջությամբ կվաճառվեր ՕԱՇ-ում կայացած գներով (ինչը առավելագույն լավատեսական սցենար է, քանի որ նոյեմբերի 28-30-ն ընկած ժամանակահատվածի համար դրական անհաշվեկշռույթը կազմել է առաքման 9%-ը), ապա ատոմային ԿԷԱ կայանի վնասը կազմում է մոտ 19 միլիոն դրամ (առանց ավելացված արժեքի հարկի), իսկ 9% դրական անհաշվեկշռույթի դեպքում՝ 15,7 միլիոն դրամ (առանց ավելացված արժեքի հարկի):

- «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության համար, որպես հաշվեկշռման ծառայություն մատուցող արտադրող (այսուհետ՝ ՀԾՄ) տեղի է ունենում հետևյալը. հաշվի առնելով ՀՊԿԼ կարգավիճակով ատոմային ԿԷԱ կայանից 13,717 դրամ/կՎտժ սակագնով ձեռքբերված և 30,517 դրամ/կՎտժ սակագնով վաճառած էլեկտրական էներգիայի 1254998,750 կՎտժ դրական անհաշվեկշռույթի քանակությունը, ՀԾՄ-ի լրացուցիչ ստացած գումարը կազմում է 21 մլն դրամ (առանց ավելացված արժեքի հարկի): Ատոմային ԿԷԱ կայանի բոլոր ժամերին դրական անհաշվեկշռույթ ընկած քանակություններն ամբողջությամբ ՕԱՇ-ում վաճառքի դեպքում ՀԾՄ-ի լրացուցիչ ստացած գումարն ու վերջինիս կողմից լրացուցիչ վճարած գումարը կազմում է 0 դրամ:
- Ինչ վերաբերում է նոյեմբերի 23-ից 27-ն ընկած ժամանակահատվածում ատոմային ԿԷԱ կայանի՝ ՕԱՇ հատվածում չվաճառած էլեկտրական էներգիայի քանակության հետևանքով գնորդների չգնած չափաքանակով լրացուցիչ վճարված գումարի հարցին, ապա Շուկայի օպերատորը նշել է, որ եթե անգամ ատոմային ԿԷԱ կայանի՝ այդ ժամանակահատվածի ամբողջ դրական անհաշվեկշռույթներն ընդունենք վաճառված ՕԱՇ հատվածում քլիրինգային գնով (ինչը գործնականում հնարավոր չէր), որի նույն քանակությունը փաստացի գնորդները գնել են ոչ թե ատոմային ԿԷԱ կայանից այլ ՀԾՄ-ից (ինչը ևս իդեալական, ոչ իրական տարբերակ է), ապա 1254 998,750 կՎտժ էլեկտրական էներգիայի ընդհանուր քանակության ժամային բացվածքը բազմապատկելով ՀԾՄ առավելագույն գնի և ժամային քլիրինգային գնի տարբերությամբ, նոյեմբերի 23-27-ն ընկած ժամանակահատվածի ՕԱՇ-ի բավարարված բոլոր գնորդների ատոմային ԿԷԱ կայանից չգնած էլեկտրական էներգիայի ընդհանուր ավելորդ վճարած գումարը կազմում է 260 702,36 դրամ (1 254 998,750 կՎտժ-ի դիմաց, առանց ԱԱՀ), այսինքն՝ 1 կՎտժ-ի համար 0,2 դրամ: Իսկ եթե հաշվի առնենք, որ ՕԱՇ-ում ատոմային ԿԷԱ կայանից վաճառքի դեպքում բավարարված մասը կլիներ ոչ թե 1 254 998,750 կՎտժ, այլ 1 254 998,750 կՎտժ քանակին ավելանար նաև 2 669 909 կՎտժ էլեկտրական էներգիան, ընդհանուր՝ 3 924 907,75 կՎտժ-ի չափով՝ հաշվի առնելով նաև նոյեմբերի 23-27-ն ընկած ժամանակահատվածի ՕԱՇ-ի էլեկտրական էներգիայի բավարարված չափաքանակը, ապա 1 կՎտժ-ի համար լրացուցիչ վճարված գումարը կկազմի 0,066 դրամ (ընդհանուր 260702,36 դրամը 3924907,75 կՎտժ-ի դիմաց հարաբերակցությամբ):

Ի լրումն վերոհիշյալի՝ Շուկայի օպերատորը նաև նշել է, որ ներկայացված հաշվարկները կատարված են տեսական՝ առավել հնարավոր սցենարներով՝ ընդգծելով, որ գործնական տարբերակում նշված թվերը կարող են էլ ավելի մեղմել ներկայացվածը,

6) ԷՄՇ կանոնների 46-րդ կետով սահմանված են ԷՄՇ-ում հաշվեկշռման պատասխանատվության իրականացման եղանակները, որի 2-րդ ենթակետով նախատեսված՝ ԷՄՇ-ում հաշվեկշռման պատասխանատվության իրականացման եղանակներից է, երբ ԷՄՇ առևտրի մասնակիցը ,ԷՄՇ կանոնների 49-րդ կետի համաձայն, միանում է ԷՄՇ այլ առևտրի մասնակցի հաշվեկշռման խմբին՝ վերջինիս լիազորելով միայն իր հաշվեկշռման պատասխանատվությունը (ՀՊԿԼ կարգավիճակ),

7) ԷՄՇ կանոնների 49-րդ կետի համաձայն՝ ԷՄՇ առևտրի մասնակիցն իրավունք ունի ստանձնել ՀՊԿԼ կարգավիճակ և ԷՄՇ-ում իր հաշվեկշռման պատասխանատվությունը լիազորել մեկ այլ ԷՄՇ առևտրի մասնակցի, եթե վերջինս ունի հաշվեկշռման խումբ (ՀՊԿԽ կարգավիճակ): ՀՊԿԼ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակցի ԷՄՇ-ում առաջացրած անհաշվեկշռույթների արդյունքում հաշվարկված էլեկտրաէներգիայի քանակն ամբողջությամբ հաշվեգրվում է ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի այն մասնակցին, որը տվյալ լիազորությունը ստանձնել է:

8) ԷՄՇ կանոնների 54.1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ատոմային ԿԷԱ կայանին տրվում է ՀՊԿԼ կարգավիճակ՝ ներառելով ՀԾՄ հաշվեկշռման խմբում՝ էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի հետ համաձայնեցված՝ էլեկտրակայանի ամբողջական կանգառի ռեժիմում պլանային նորոգման առաջին օրվանից մինչև պլանային նորոգման վերջին օրն ընկած ժամանակահատվածի համար,

9) ԷՄՇ կանոնների 54.2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ ԿԷԱ կայանները ՀՊԿԼ կարգավիճակի ժամանակահատվածում չեն կարող էլեկտրական էներգիա վաճառել ՕԱԾ-ում, իսկ նույն կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ԷՄՇ-ում կնքված գործարքների նկատմամբ բացասական անհաշվեկշռույթի (ներառյալ՝ սեփական կարիքի համար էլեկտրական էներգիայի սպառման արդյունքում առաջացած անհաշվեկշռույթի) դեպքում ՀԾՄ-ին վճարում են այդ անհաշվեկշռույթի արդյունքում ԷՄՇ-ում վաճառված լրացուցիչ էլեկտրական էներգիայի քանակության և տվյալ ԿԷԱ կայանի էլեկտրական էներգիայի սակագնի արտադրյալի չափով, իսկ դրական անհաշվեկշռույթի դեպքում տվյալ ԿԷԱ կայանն է վճարվում ՀԾՄ-ի կողմից՝ այդ անհաշվեկշռույթի արդյունքում վերջինիս վաճառված լրացուցիչ էլեկտրական էներգիայի քանակության և տվյալ ԿԷԱ կայանի էլեկտրական էներգիայի սակագնի արտադրյալի չափով:

10) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Շուկայի օպերատորի կողմից չի ապահովվել ԷՄՇ կանոնների 54.1-ին կետի 2-րդ ենթակետով նախատեսված պահանջի կատարումը, այն է՝ կայանի ոչ ամբողջական կանգառի ռեժիմում պլանային նորոգման դեպքում ատոմային ԿԷԱ կայանի՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կայանի, հաշվեկշռման պատասխանատվության ինքնուրույն կարգավիճակը (այսուհետ՝ ՀՊԿԻ կարգավիճակ) փոփոխվել է, և կայանին 2025 թվականի նոյեմբերի 23-ին, ժամը 00:00-ից տրվել է ՀՊԿԼ կարգավիճակ՝ վերջինիս ներառելով ՀԾՄ հաշվեկշռման խմբում: Ատոմային ԿԷԱ կայանի հաշվեկշռման պատասխանատվության կարգավիճակը Շուկայի օպերատորի կողմից վերստին փոփոխվել է, և կայանին տրվել ՀՊԿԻ կարգավիճակ միայն 2025 թվականի նոյեմբերի 27-ին, ժամը 01:00-ից: Արդյունքում, ատոմային ԿԷԱ կայանը 2025 թվականի նոյեմբերի 23-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 27-ն ընկած ժամանակահատվածում զրկվել է ՕԱՇ-ում հայտ ներկայացնելու իրավունքից: Այսպիսով, խախտվել են ինչպես ատոմային ԿԷԱ կայանի, այնպես էլ ՕԱՇ առևտրին մասնակցող շուկայի մասնակիցների, այդ թվում՝ մեծածախ առևտրի լիցենզիա ունեցող անձանց, մատակարարների և որակավորված սպառողների օրինական շահերը:

Այսպես, հիշյալ ժամանակահատվածում ատոմային ԿԷԱ կայանի կողմից առաքվել է 25,233,708.56 կՎտժ էլեկտրական էներգիա, կայանն ունեցել է 1,254,998.75 կՎտժ-ի չափով դրական անհաշվեկշռույթ և 47,438.04 կՎտժ-ի չափով բացասական անհաշվեկշռույթ: Ատոմային ԿԷԱ կայանը զրկվել է նշված 1,254,998.75 կՎտժ-ի չափով էլեկտրական էներգիան ՕԱՇ-ում ավելի բարձր քլիրինգային գնով (2025 թվականի նոյեմբերի 23-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 27-ն ընկած ժամանակահատվածում ՕԱՇ-ում ձևավորված ամենացածր քլիրինգային գինը կազմել է 25 դրամ/կՎտժ, միջին քլիրինգային գինը՝ 29,95 դրամ/կՎտժ), քան կայանի սակագինն է (13.717 դրամ/կՎտժ), վաճառելու հնարավորությունից՝ անհաշվեկշռույթի այդ քանակության դիմաց վճարվելով ՀԾՄ-ի կողմից՝ այդ անհաշվեկշռույթի արդյունքում վերջինիս վաճառված լրացուցիչ էլեկտրական էներգիայի քանակության և տվյալ ատոմային ԿԷԱ կայանի էլեկտրական էներգիայի սակագնի արտադրյալի չափով, ինչի մասին իր դիտարկումներում փաստել է նաև Շուկայի օպերատորը:

Ինչ վերաբերում է Շուկայի օպերատորի այն դիտարկմանը, թե ԿԷԱ կայանների համար ՇԿԾ-ի ՕԱՇ հատվածում էլեկտրական էներգիայի գնման և վաճառքի հայտ ներկայացնելու հնարավորությունը ծրագրում արգելափակված չէ, և ատոմային ԿԷԱ

կայանն, այնուամենայնիվ, ոչ ամբողջական կանգառի ռեժիմում պլանային նորոգման դեպքում ՀՊԿԼ կարգավիճակով տեխնիկապես չի զրկվել ՕԱԾ-ում հայտ ներկայացնելու հնարավորությունից, ապա հարկ է նշել, որ ԷՄՇ կանոնների 54.2-րդ կետի 1-ին ենթակետով հստակ ամրագրված է ՀՊԿԼ կարգավիճակի ժամանակահատվածում ԿԷԱ կայանների՝ ՕԱԾ-ում հայտ ներկայացնելու արգելքը, ինչով էլ պարտավոր էր ղեկավարվել ատոմային ԿԷԱ կայանը:

Ինչ վերաբերում է ՕԱԾ առևտրին մասնակցող շուկայի մյուս մասնակիցների՝ մեծածախ առևտրի լիցենզիա ունեցող անձանց, մատակարարների և որակավորված սպառողների օրինական շահերի խախտմանը, ապա վերջիններս զրկվել են հիշյալ անհաշվեկշռույթի չափով ձևավորվող քլիրինգային գնով ՕԱԾ-ից էլեկտրական էներգիա ձեռք բերելու հնարավորությունից՝ իրենց պահանջարկն ամբողջապես բավարարելու նպատակով ստիպված լինելով լավագույն դեպքում չկարգավորվող գներով էլեկտրական էներգիա ձեռք բերել ուղիղ պայմանագրերի շուկայի չկարգավորվող բաղադրիչից (ՉՈՒՊ բաղադրիչ), այլապես՝ հաշվեկշման առավելագույն գնով՝ ՀԾՄ-ից,

11) «Էներգետիկայի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից Օրենքի դրույթները, հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում հանձնաժողովն իրավասու է կիրառելու Օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցները, վերականգնելու մինչև խախտումը եղած դրությունը, կատարելու դրանից բխող գործողություններ (այդ թվում՝ հաշվարկ, վերահաշվարկ և այլն), ինչպես նաև տալ դրանց կամ խախտումը վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ՝ հաշվի առնելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված առանձնահատկությունները,

12) Օրենքի 7-րդ մասի համաձայն՝ կայանի կառուցման ժամանակահատվածում էլեկտրական (ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված) կամ ջերմային էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձի, էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի, էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի, էլեկտրաէներգիայի մեծածախ առևտրի լիցենզիա ունեցող անձի, էլեկտրաէներգիայի մատակարարման լիցենզիա ունեցող անձի (բացառությամբ՝ էլեկտրաէներգիայի երաշխավորված մատակարարի), գազամատակարարման համակարգի օպերատորի, էլեկտրական էներգիայի (հզորության) կամ ջերմային

էներգիայի հաղորդման կամ բնական գազի փոխադրման լիցենզիա ունեցող անձի, մինչև 30 ՄՎտ դրվածքային հզորություն ունեցող կայաններում էլեկտրական էներգիա արտադրող լիցենզավորված անձի կողմից սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված արարքը կատարելն առաջացնում է նախազգուշացում,

13) Օրենքի 9-րդ մասի համաձայն՝ Օրենքի 42-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված անձի կողմից կարգավորող հանձնաժողովի՝ էներգետիկայի բնագավառում օրենսդրության համաձայն ընդունված իրավական ակտի պահանջը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, եթե արարքը չի պարունակում սույն հոդվածի այլ մասերով սահմանված այլ վարչական իրավախախտման հատկանիշներ, առաջացնում է նախազգուշացում,

14) Օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ Օրենքի 42-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված անձի կողմից Օրենքի 42-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված արարքը կատարելը, որի հետևանքով վտանգվել է կամ կարող էր վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, կամ այն ուղղակիորեն հանգեցրել է մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման կամ լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման կամ էներգետիկայի բնագավառում այլ լիցենզավորված անձի օրինական շահերի խախտման կամ լիցենզավորված գործունեության խոչընդոտմանը կամ լիցենզիայի պայմանների չկատարմանը կամ ոչ պատշաճ կատարմանը կամ խոչընդոտել է կարգավորող մարմնի՝ կարգավորման գործառույթների պատշաճ իրականացմանը, առաջացնում է տուգանք՝ մեկ միլիոն դրամից մեկուկես միլիոն դրամի չափով, կամ լիցենզիայի գործողության կասեցում կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Այսպիսով, Շուկայի օպերատորի կողմից ներկայացված պարզաբանմամբ ընդունվել է խախտման առկայության հանգամանքը, իսկ նրա կողմից ներկայացված պատճառաբանությունները հիմնավորված չեն, չեն բխում գործող իրավակարգավորումներից և չեն կարող հիմք հանդիսանալ պատասխանատվությունից ազատվելու համար:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ վարչական վարույթի շրջանակներում հաստատվել է Շուկայի օպերատորի կողմից իրավախախտումը կատարած լինելու հանգամանքը և դրա հետևանքով խախտվել են էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձի՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության օրինական շահերը, Հանձնաժողովը գտնում է, որ վերոնշյալ խախտման

համար որպես համաչափ պատասխանատվության միջոց անհրաժեշտ է կիրառել 1 000 000 դրամ գումարի չափով տուգանք,

15) Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 11-րդ մասերը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. ԷՄՇ կանոնների 54.1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջի խախտման համար Շուկայի օպերատորին տուգանել 1000000 (մեկ միլիոն) դրամ գումարի չափով:

2. Շուկայի օպերատորին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում որոշման 1-ին կետով նախատեսված գումարը 900005242327 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքերի:

4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման «Կատարողական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Շուկայի օպերատորին օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
-- փետրվարի 2026թ.